



## ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

**WESTERN PRELACY**

**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**

**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



### **ԱՄԱԳ ԵՐԵՔՇԱԲԹԻ՝ ՏԱՍԸ ԿՈՄԱՆԱՑԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ԹԵՄԻՍ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ ՄԷՋ**

Ս. Յարութեան տօնը կանխող Աւագ Շաբթուան Երեքշաբթի օրը, մեր եկեղեցւոյ կարգաւորութեան համաձայն յիշատակն է Տասը Կոյսերու առակին: Այս առիթով՝ յատուկ արարողութիւն տեղի ունեցաւ մեր Թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Աւագ Երեքշաբթի, 19 Ապրիլի երեկոյեան, հանդիսապետեց Կլենտոյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ արարողութեան եւ այս առիթով իր պատգամը ուղղեց հաւատացեալներուն:

Սրբազանը մեկնաբանեց Տասը Կոյսերու առակի խորհուրդը, յիշեցնելով հաւատացեալներուն, թէ ինչպէս հինգ իմաստուն կոյսերը հեռատեսութիւնն ու իմաստութիւնը ունեցած էին նախապատրաստուելու եւ իրենց լապտերներուն համար յաւելեալ ձեթ առնելու՝ Փեսան դիմաւորելու համար, նոյնիսկ՝ անոր ուշանալուն պարագային, մինչդեռ յիմար հինգ կոյսերը հեռուն մտածած չըլլալով ու իրենց հետ յաւելեալ ձեթ առած չըլլալով՝ չկրցան Փեսան դիմաւորել ու անոր հետ հարսնարան մտնել:

Սրբազանը նշեց, թէ առակին մէջի Փեսան խորհրդանիշն է Տէր Յիսուս Զրիստոսի եւ անոր Երկրորդ Գալուստին: Ինչպէս որ կոյսերը իրենք յստակ չէին գիտեր, թէ երբ փեսան պիտի գար, նոյնպէս ալ մենք չենք գիտեր թէ երբ տեղի պիտի ունենայ Տիրոջ Երկրորդ Գալուստը: Ուստի, իմաստուն կոյսերուն նման, հաւատացեալներս պետք է միշտ պատրաստ ըլլանք դիմաւորելու Տէրը:

Արարողութեան մասնակցեցան տասը պարմանուհիներ, իբրեւ խորհրդանիշ առակին մէջ յիշատակուած տասը կոյսերուն: Արարողութեան աւարտին Առաջնորդ Սրբազանը օրհնեց զանոնք ու բոլոր հաւատացեալները յորդորեց, որ հետեւին իմաստուն կոյսերու օրինակին:

### **HOLY TUESDAY COMMEMORATION**

On the evening of Tuesday, April 19th, 2011 the commemoration of Holy Tuesday took place in Prelacy Churches. H.E. Archbishop Moushegh

Mardirossian, Prelate, conducted services at St. Mary's Church in Glendale and delivered the sermon on the Parable of the Ten Maidens.

The Prelate went over the parable, reminding the faithful how the five wise maidens had the foresight to take spare oil with them and were therefore ready to greet the bridegroom even when he was delayed, while the five foolish maidens did not think ahead to take extra oil and were thus unable to greet the bridegroom.

The Prelate noted that the bridegroom represents our Lord Jesus Christ and His Second Coming, and just as the maidens did not know the exact time of the bridegroom's arrival, we too do not know the time of His Second Coming. Therefore, like the wise maidens, we must be prepared and ready at all times.

Ten young girls participated in the service representing the ten maidens. At the conclusion of the service the Prelate blessed them and urged them and all the faithful in attendance to follow in the example of the five wise maidens.